ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Քննադատական մտածողության ձևավորումը տարրական դպրոցում

ԱՌԱՐԿԱ՝ Դասվար (Մայրենի, Մաթեմատիկա)

ՀԵՂԻՆԱԿ՝ Միրզոյան Արփիկ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ <<Հալիձորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդագյուլյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

1.Քննադատական մտածողության ձևավորման առանձնահատկությունները տարրական դասարաններում----------5

2.Քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում----------9

3.Դասի պլան----------13

Եզրակացություններ ----------18

Օգտագործած գրականության ցանկ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակության զարգացման ներկա փուլում կարևոր խնդիր է համակողմանիորեն զարգացած, բարոյական բարձր հատկանիշներով օժտված անհատի ձևավորումը: Այդպիսի անհատի ձևավորման, կրթության և դաստիարակության ուղղությամբ ծավալվող աշխատանքների գործում մեծ է դպրոցի դերը, որի փոփոխությունները, պայմանավորված արդի ժամանակաշրջանում հասարակական կյանքի տեղաշարժերով, արտացոլվում են նաև կրթության համակարգում: Ժամանակակից հասարակությանն անհրաժեշտ է ստեղծագործական կարողություններով օժտված, համակողմանի զարգացած, մշտապես ինքնազարգացման ձգտող անձնավորություն՝ ունակ հեշտությամբ կողմնորոշվելու անընդհատ փոփոխվող իրականության մեջ և պատրաստ արագորեն յուրացնել գործունեության նորանոր տեսակներ և ոլորտներ: Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի առավել անկաշկանդ, ինքնուրույն և հանդես գան ակտիվ մասնակցի դերով: Արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ, որոնց ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր:

Ուսուցման գործընթացի կատարելագործմանը, սովորողների ակտիվացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում է մանկավարժական տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունեցող քննադատական մտածողության տեխնոլոգիան: Քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոխադարձ վստահության մթնոլորտի առկայություն: Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին, հաղորդակցվել և յուրաքանչյուր դասին ունենալ իր ներդրումը:

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է տարրական դպրոցում կիրառվող ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների կարևորագույն և անփոխարինելի դերով, որոնց ճիշտ և նպատակային կիրառումը դասի տարբեր փուլերում

նպաստում է կրտսեր դպրոցականի հոգեբանության, բնավորության գծերի, քննադատական մտածողության, արժեքային համակարգի ձևավորմանն ու զարգացմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Տարրական դասարաններում քննադատական մտածողության զարգացման հիմնական նպատակն է ակտիվացնել ուսումնական գործընթացը և քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառմամբ նպաստել ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնել կիրառելի, օժանդակել աշակերտների ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանել նրանց ստեղծագործական մտածողությունը:

Հետազոտական աշխատանքի առաջադիր խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմայի վերաբերյալ գիտական գրականություն,
2. բացահայտել քննադատական մտածողությունը զարգացնող ժամանակակից մեթոդների առանձնահատկությունները,
3. առանձնացնել և մայրենիի դասագործընթացում փորձարկել մի քանի մեթոդներ,
4. համակարգել մի շարք մեթոդներ ԽԻԿ համակարգի տարբեր փուլերում:

Հետազոտական աշխատանքի գործնական նշանակությունը պայմանավորված է նրանում վերլուծված և ներկայացված քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիայի, մասնավորապես ԽԻԿ մոդելով կառուցված դասի՝ տարրական դասարաններում իրականացրած մեր փորձով, ինչն օգտակար կլինի մանկավարժների, մանկավարժական բուհում սովորող ուսուանողների համար:

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

‹‹Քննադատական մտածողությունը›› հին արմատներ ունի, բայց միևնույն ժամանակ ուսուցման համակարգում բավականին նոր մոտեցում է, որը վերջին շրջանում ինքնուրույն զարգացում է ապրել: Մանկավարժական մտքի զարգացման ընթացքում այդ մոտեցումը ստացել է տարբեր արտահայտություններ և հիմնականում ընկալվել է որպես աշակերտին՝ ուսուցման գործընթացին ավելի ակտիվ մասնակից դարձնելու հայեցակարգային հիմք: Այսօր մանկավարժական գրականության մեջ ձևավորվել են ‹‹քննադատական ուսուցման›› բազմաթիվ սահմանումներ, սակայն շատ մանկավարժական հասկացությունների նման այստեղ նույնպես դեռ չի ձևավորվել բոլորի կողմից ընդունված միասնական սահմանման մի տարբերակ: Կարելի է ասել, որ քննադատական մտածողությունն ունի երկու բաղկացուցիչ մաս. բաղկացուցիչներից մեկը ենթադրում է ինֆորմացիան և համոզմունքները գեներացնելու և վերամշակելու հմտությունների ամբողջություն, իսկ երկրորդը՝ այդ հմտություններն օգտագործելու սովորույթն է, որի արդյունքում ձևավորվում է սեփական վարքագիծն ուղղորդելու հիմքը: Քննադատական մտածողության մեկ այլ ականավոր մասնագետ Էդուարդ Գլասերը հակիրճ սահմանել է, թե որն է քննադատաբար մտածելու կարողությունը: Ըստ նրա, այն ունի երեք բաղկացուցիչ մաս.

- անհատի կյանքի և գործունեության ընթացքում հանդիպած խնդիրները մտածված ձևով քննարկելու վարքագիծն է,
- տրամաբանական հետաքննության (logical inquiry) և հիմնավորման/ պատճառաբանման (reasoning) մեթոդների իմացությունն ,է,
- վերոնշյալ մեթոդները կիրառելու հմտությունն է:

Նշենք, որ Գլասերի այս սահմանումն ընկած է նաև հետազոտության՝ «քննադատաբար մտածելու կարողություն» փոփոխականի (variable) աշխատանքային սահմանման հիմքում[1]: Իսկ ըստ Դեյվիդ Քլուսթերի՝ քննադատական մտածողության գաղափարի ձևակերպման համար կարևոր են հետևյալ հիմնադրույթները.

[1] https://www.osf.am/wp-content/uploads/2017/10/, 25.10.2023:

- բոլոր երեխաները պետք է գիտակցեն, որ իրենք ունեն բնածին ընդունակություններ և կարող են արդյունավետ սովորել:
- ուսուցիչը պետք է աշխատի ստեղծագործաբար:
- ուսուցիչը պետք է գիտակցի աշակերտների քննադատական մտածողության զարգացման անհրաժեշտությունը:

Քննադատական ուսուցման հիմնական նպատակն է ակտիվացնել ուսումնական գործընթացը: Ուսուցումը պետք է ընկալել որպես աշակերտակենտրոն գործընթաց: Ըստ քննադատական մտածողության տեսության՝ ուսուցման համակարգը բաղկացած է ուսուցման–ուսումնառության երեք փուլերից, որոնք հիմնված են մարդու ճանաչողության գիտական հետազոտությունների տվյալների վրա: Այս մոդելը նկարագրում է ճանաչողական մի գործընթաց, որի մեջ աշակերտները պետք է ներգրավվեն մինչև նյութի սովորելը (խթանում), նյութի սովորելու ընթացքում (իմաստավորում) և նյութը սովորելուց հետո (կշռադատում): Քննադատական մտածողության զարգացումը նպաստում է ուսման արդյունավետության բարձրացմանը: Այն գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ինչպես արդեն նշել ենք, քննադատական մտածողության զարգացման համար կարևոր են և' դասավանդման մեթոդները, և’ դասավանդվող առարկաները: Կարելի է պնդել նաև այն, որ քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտությունները հնարավոր չէ կիրառել առանց խնդրո առարկայի վերաբերյալ նախնական գիտելիքի: Ուստի քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը պետք է լինի և’ առարկայական ծրագրի, և’ ուսումնական պլանի զարգացման հիմքում: Քննադատական մտածողության հմտությունների ձեռքբերումը կախված է դասավանդման և սովորելու մեթոդից: Սովորելու համագործակցային մեթոդը առավել լայն հնարավորություն է տալիս աշակերտներին՝ գաղափարները վերլուծելու, սինթեզելու և գնահատելու: Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման համար գրականությում գոյություն ունեցող մոդելները, հիմնվում են դեռևս 1956թ. ականավոր գիտնական Բենջամին Բլումի կողմից մշակված տաքսոնոմիայի վրա: Բլումի տաքսոնոմիայի ճանաչողական կամ, այսպես կոչված, իմացական խումբը բաղկացած է վեց մակարդակներից՝ գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, համադրում /սինթեզ/, և գնահատում:

- Գիտելիքի ձեռքբերման մակարդակում սովորողը կարող է հիշել, տարբերակել, մտաբերել կամ գտնել ուսուցման ընթացքում ներկայացված յուրահատուկ տեղեկատվությունը: Այն կարող է դրսևորվել փաստերի, կանոնների, դիագրամաների, ձայնի և այլնի միջոցով:
- Ընկալման մակարդակում սովորողը կարող է ցույց տալ, որ հասկացել է տեղեկությունը՝ վերափոխելով այն տարբեր ձևերի կամ ճանաչել դրա վերափոխված տարբերակը:Այն կարող է իրականացվել սովորողի կողմից բառերով բացատրության, ամփոփման, օրինակ բերելու և այլ ձևերով:
- Կիրառման մակարդակում սովորողը կարող տեղեկատվությունը կիրառել՝ այն օգտագործելով կոնկրետ գործողության մեջ: Այդ գործողությունները կարող են լինել հաշվելը, գրելը, կարդալը, սարքավորումներ օգտագործելը և այլն:
- Չորրորդ մակարդակում, որը ենթադրում է վերլուծություն, սովորողը կարող ճանաչել տեղեկատվության հիմնական կազմվածքն ու կառուցվածքը, տրոհել բաղկացուցիչ մասերի և որոշել դրանց միջև առկա կապերը: Սովորողը կարող տարբերել փաստերը ենթադրություններից:
- Հինգերորդ մակարդակը համադրումն է /սինթեզ/: Այս մակարդակում սովորողը կարող տեղեկատվություն ստանալ տարբեր աղբյուրներից՝ իր անհատական նյութը, տեսակետը, դիրքորոշքումը ձևավորելու նպատակով:
- Գնահատման մակարդակում սովորողը կարող որոշակի չափորոշիչներ կիրառել՝ օբյեկտի վերաբերյալ եզրահանգումներ անելու համար:

Վերոնշյալ բոլոր վեց մակարդակներում էլ սովորողներին անհրաժեշտ են համապատասխան հմտություններ, սակայն քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից պետք է առավելապես շեշտել վերլուծության, համադրման /սինթեզի/ և գնահատման մակարդակները: Առաջին երեք մակարդակները՝ գիտելիք, ընկալում, և կիրառում, առավել հատուկ են ակադեմիական առարկային, իսկ հմտությունները, որոնցով պայմանավորված են վերլուծությունը, սինթեզը և գնահատումը, ընդհանուր են և չեն կարող սահմանափակվել մեկ առարկայով: Սա նշանակում է, որ եթե քննարկում է ծավալվում որևէ խնդրի շուրջ, անհատը, որը ցանկություն ունի մասնակցելու

այդ քննարկմանը, պետք է նախ ունենա համապատասխան գիտելիք տվյալ խնդրի մասին և ընկալի խնդիրը, որն իր հերթին հիմք կծառայի քննադատական մտածողության հմտությունների կիրառման համար:

Տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը կլինի արդյունավետ մի շարք մանկավարժական պայմանների առկայության դեպքում.

- բարենպաստ և զարգացնող կրթական միջավայրի ապահովում,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում,
- ուսուցման գործընթացի միջոցների, մեթոդների, ընթացակարգի ճիշտ ընտրություն,
- ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառում,
- ուսման դրական ու ներքին դրդապատճառների ձևավորում,
- դասարանում դրական հոգեբանական մթնոլորտի ապահովում,
- ուսուցչի մասնագիտական պատրաստվածության առկայություն[2]:

[2] https://aspu.am/website/images/files/,25.10.2023թ.:

2.ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ժամանակակից կրթական համակարգը ձևավորում է երեխաների կրթական գործունեությունը, պահպանում է կրթական համակարգը և ճանաչողական դրդապատճառները, իրականացնում է կրթական նպատակները, վերահսկում և գնահատում է ուսումնական նպատակներն ու նրանց արդյունքները: Կրտսեր դպրոցականն ունի տարիքային առանձնահատկություններ. անկայուն ուշադրություն, տեսողական-պատկերավոր մտածողության գերակշռում, բարձր շարժողական ակտիվություն, ձգտում խաղային գործունեության, ճանաչողական հետաքրքրությունների բազմազանություն: Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամի կազմակերպում: Մեր դիտարկումների ընթացքում հանգել ենք այն եզրակացության, որ առանց շարժառիթի կամ թույլ շարժառիթով գործունեությունը ցանկացած ձևերի և մեթոդների կիրառման դեպքում կա՛մ ընդհանրապես չի իրականացվում, կա՛մ ծայրաստիճան անկայուն է լինում: Թե աշակերտն իրեն ինչպես է զգում որոշակի իրավիճակում, կախված է այն ջանքերի ծավալից, որոնք նա գործադրում է իր ուսման ժամանակ: Այդ պատճառով կարևոր է, որ ուսուցման ամբողջ գործընթացը երեխայի մոտ առաջացնի ինտենսիվ և ներքին դրդում՝ լարված մտավոր աշխատանքի համար: Դպրոցականի զարգացումն ավելի ինտենսիվ և արդյունավետ է տեղի ունենում, եթե նա ներառված է գործունեության մեջ, որը համապատասխանում է նրա տարիքային առանձնահատկություններին: Եթե դրական հույզեր է առաջացնում ուսուցումը, իսկ կրթական գործընթացի մասնակիցների մանկավարժական ներգործությունը հիմնված է վստահության վրա, ապա ուժեղացնում է հույզերի և ըմբռնման դերը: Ուսումնական կայուն շարժառիթի (մոտիվացիայի) և ճանաչողական ակտիվության զարգացման նպատակով կիրառվում են աշակերտների գործունեության բազմազան մեթոդներ՝ խրախուսում, հաջողության իրավիճակների ստեղծում, պրոբլեմային իրավիճակների ստեղծում, ստեղծագործական առաջադրանքների կատարում, պատասխանատվության ձևավորում, օգտակար լինելու ցանկության ձևավորում, փոխօգնության իրավիճակների ստեղծում, կոլեկտիվ աշխատանքի արդյունքների նկատմամբ հետաքրքրություն, ինքնաստուգման և փոխստուգման կազմակերպում, դրդում այլընտրանքային լուծումների որոնման:

Դասի հաջողության ամենակարևոր պայմաններից մեկը աշակերտների համընդհանուր ուշադրությունն է: Ուշադրությունը կենտրոնացնելու հիմնական պայմաններից են ուսուցչի՝ առարկան լավ տիրապետելը, գրական ճոխ ու արտահայտիչ լեզուն, հաղորդելու բնատուր շնորհքը, մանկավարժական մոտեցումը, գլխավորը երկրորդակից տարբերելու կարողությունը և դասի դիդակտիկական կահավորումը: Բայց սրանք էլ բավական չեն: Ուսուցիչը պետք է քաջատեղյակ լինի հաղորդման մեթոդներին ու մեթոդական հնարներին և տիրապետի դրանց խելացիորեն գործադրելու արվեստին: Մեթոդների ընտրության համար տրվում են մի քանի գործնական առաջարկներ: Ուսուցման մեթոդները ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի.

- նյութի առանձնահատկությունը և նպատակադրումը
- շրջապատի հնարավորությունները
- դպրոցի նյութական բազզան
- դասարանի ընդհանուր մակարդակը և երեխաների տարիքային առանձնահատկությունները

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն իրականացվում է ըստ հստակ սահմանված փուլերի՝ խթանում, իմաստավորում և կշռադատում /ԽԻԿ համակարգ/: Այս համակարգն ուղղված է սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը, որի շնորհիվ խթանվում ու վեր են հանվում սովորողների ունեցած գիտելիքները, իմաստավորվում և կշռադատվում է ուսուցանվող նյութը՝ վերլուծության, համադրության, համեմատությունների ու եզրահանգումների միջոցով: Քննադատական մտածողության տեխնոլոգիան հանդես է գալիս որոշակի մեթոդախմբով, ընդ որում յուրաքանչյուր մեթոդ կիրառվում է ԽԻԿ համակարգի կոնկրետ փուլում՝ ելնելով տվյալ մեթոդի նպատակներից, օրինակ՝ մտագրոհ մեթոդը կիրառելի է խթանման փուլում, իսկ հինգ րոպեանոց շարադրանքի մեթոդը կամ Վեննի դիագրամ մեթոդը միայն կշռադատման փուլում և այլն: Պետք է նշել, որ քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդները տարրական դպրոցում կիրառելի են միայն որոշակի փոփոխությունների, պարզեցումների արդյունքում: Ուստի ներկայացված մեթոդները համապատասխանեցվել են տարրական դպրոցին, օրինակ՝ մտավոր գրոհ, քառաբաժանում, ինքնագնահատման աղյուսակ /ԳՈՒԱ/, Վեննի դիագրամ, հնգյակ, կանխագուշակումների աղյուսակ,

կենսագրական բանաստեղծություն, աքրոստիկոս և այլ մեթոդներ: Յուրաքանչյուրը դիտարկվել է հետևյալ սկզբունքով՝ ինչին է նպաստում, ինչպես է իրականացվում և ինչպես կարող է կիրառվել տարրական դպրոցում: Օրինակ՝ ջիգսո /խճանկար/ մեթոդը առավելապես նպաստում է սովորողների համագործակցային կարողությունների ձևավորմանը: Այն տարրական դպրոցում անհրաժեշտ է կիրառել միայն փոքրածավալ, պարզ և մատչելի բովանդակությամբ նյութի ուսումնասիրման ժամանակ: Աշխատանքային խմբերը պետք է լինեն փոքրաքանակ: Խմբային աշխատանքների ժամանակ կրտսեր դպրոցականներին կարելի է թույլատրել նշումներ անել, որպեսզի չդժվարանան և չհոգնեն: Քննադատական մտածողությունը խթանելու և զարգացնելու համար ուսուցման գործընթացում օգտագործվում են տարաբնույթ մեթոդներ.

- գիտելիքների համակարգ ձևավորող՝ մտավոր գրոհ, փոխգործուն նշաններ, խմբավորում,
- ճանաչողական կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներ՝ Վեննի դիագրամ, խորանարդում, քառաբաժանում, պրիզմա, մանրապատում /կմախք/,
- հաղորդակցական կարողություններ և հմտություններ ձևավորող՝ հարցադրումներով ուղղորդված ընթերցանություն, «Հաստ» և «բարակ» հարցեր ,
- համագործակցային կարողություններ և հմտություններ ձևավորող՝ ջիգսո /խճանկար/, շրջանաձև շարադրանք,
- ստեղծագործական կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են՝ հնգյակ, բանալի բառեր, աքրոստիկոս,
- ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են՝ ինքնագնահատման աղյուսակ /ԳՈՒՍ/, երկու աստղ և մեկ ցանկություն և այլն,
- արժեքային համակարգ ձևավորող մեթոդներն են՝ ռուբրիկ, հեղինակի աթոռ մեթոդները:

Հարկ է նշել, որ իրականացված խմբավորումը պայմանական է, քանի որ քննադատական մտածողության տեխնոլոգիայի որոշ մեթոդներ կարելի է միաժամանակ

դիտարկել չափորոշչի մի քանի բաղադրիչների տեսանկյունից: Մեթոդները խմբավորվել են՝ ելնելով դրանց առաջնային նպատակներից: Այս բոլոր մեթոդները կարելի է օգտագործել հատկապես մայրենիի դասին՝ բարձրացնելով ուսուցման արդյունավետությունը: Քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոխա-դարձ վստահության մթնոլորտի առկայություն: Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին, հաղորդակցվել և յուրաքանչյուր դասին ունենալ իր՝ թեկուզ փոքրիկ ներդրումը: Քննադատական մտածողության մեթոդների կիրառմամբ ընթացող դասերի ժամանակ աշակերտներն ընդգրկվում են դասապրոցեսի մեջ՝ մինչև նոր նյութի հաղորդումը (խթանում), նյութի մատուցման ընթացքում (իմաստի ընկալում) և նյութը յուրացնելուց հետո (կշռադատում): Այս համակարգը հայտնի է որպես ԽԻԿ /հապավումով/ համակարգ: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնում է կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սովորողների ստեղծագործական մտածողությունը:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ուսուցչի անունը, ազգանունը՝ Միրզոյան Ա.

Դասարանը՝ Չորրորդ

Առարկան՝ Մայրենի

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ Չորս խնձոր: Թվական:

Դասի նպատակը՝

- հասկանալ տեքստի բովանդակությունը
- տեքստը ճիշտ հնչերանգով կարդալու կարողությունների զարգացում,
- կապ ստեղծել բովանդակության և նկարազարդման միջև,
- վերլուծեն բնագիրը՝ կարևորելով ստեղծագործության մեջ տեղի ունեցող դեպքերը
- դաստիարակել ճիշտ վերաբերմունք շրջակա միջավայրի և մարդկանց նկատմամբ,
- ընդհանուր հասկացություն թվականների մասին

Խնդիրները՝

Կրթական

- տեքստի բաժանումը իմաստային հատվածների,
- կարողանալ մասնակցել թեմայի շուրջ ծավալվող քննարկումներին,
- զարգացնել լեզվական կարողունակություն և գրագիտություն,
- հասկանալ օրինաչափությունները

Զարգացնող

- խոսքի, մտածողության զարգացում

- լսողական հմտությունների զարգացում
- վերլուծական մտքի զարգացում

Դաստիարակչական

- խթանել աշակերտների ստեղծագործ մոտեցումը թեմային,
- ստեղծել միջավայր, որը թույլ կտա աշակերտներին ազատ խոսել և արտահայտել իրենց կարծիքը
- սովորեցնել լսել ընկերներին, հարգել տարբերվող կարծիքները և կատարել եզրահանգումներ

Դասի ավարտին սովորողը պետք է՝

Իմանա՝

- տեքստի հիմնական իմաստը,
- վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ,
- թվականը, թվական + գոյական կառուցվածքով բառակապակցությունները, բառը, բառերի որոշակի քանակի բացատրությունը համատեքստում:

Կարողանա

- տեքստը կարդալ ուշադիր և հանգամանալից,
- առանձնացնել բնագրում ծավալվող կարևոր իրադարձությունները,
- տալ դեպքերի ճիշտ հաջորդականությունը,
- գնահատական տալ իրավիճակին,
- հասկանալ պատճառահետևանքային կապը,
- տարբերել և կիրառել թվականները

Տիրապետի

- սահուն, գրական շեշտի և առոգանության պահպանումով բարձրաձայն ընթերցել տեքստը,
- բանավոր վերարտադրել տեքստի բովանդակությունը,
- ըստ անհրաժեշտության տեքստի բովանդակությունը մտովի բաժանել իմաստային ամբողջական հատվածների , կազմել պլան,
- բառերի որոշակի քանակի բացատրությունը, քանակական և դասական թվականների կազմությունը

(ՀՊՉ)

- **S1**-Ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով, կարդա, հասկանա, վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը:
- S24-Ստեղծի ընկերական հարաբերություններ, լսի, հասկանա, ապրումակցի, քաջալերի և աջակցի մյուսներին, համագործակցի տարբերձևաչափերով, դրսևորի դրական վերաբերմունք, ձգտի կոնֆլիկտների խաղաղ լուծմանը:
- **S26**-Արտահայտի սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկություններ:

Անհրաժեշտ սարքավորումներ և ռեսուրսներ՝ համակարգիչ, տեսաձայնա նվագարկիչ, գրատախտակ, նկարներ, աղյուսակներ, քարտեր:

Դասի տիպը՝ համակցված

Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ՝ «Մտագրոհ» կամ «Մտքերի տարափ», «Կանխագուշակում» , «Աքրոստիկոս», «Քառաբաժան» :

Դասի ընթացքը՝ ԽԻԿ համակարգով

Խթանման փուլ

- «Կանխագուշակում» մեթոդով գուշակել բնագրի բովանդակությունը՝ համեմատելով գրքի նկարազարդումն ու վերնագիրը :

Իմաստի ընկալում

- Հետաքրքրաշարժ պատմությունների և սահիկաշարերի ցուցադրություն՝ բնության և մարդու կապի, լավ ու վատ արարքների, կատարած չար ու բարի գործերի մասին:
- Բնագրի ընթերցում , իրավիճակների քննարկում, պարզաբանում:
- Բնութագրել բնագրի հերոսներին, մեկնաբանել արարքները, նկարագրել արտաքին և ներքին հատկանիշները, նշել նմանություններն ու

տարբերությունները՝ ներկայացնելով յուրաքանչյուրի «գործը»,«խելքը», «գեղեցկությունը», «բախտը»:

- Ընկալել ասույթի իմաստը «Մի գովիր մարդու տեսքը, այլ գովիր մարդու խելքը, իմաստությունը, գործը» համեմատելով բնագրի հերոսներին:
- Բովանդակության գաղափարական մեկնաբանում՝ լսելու, հասկանալու, ապրումակցելու, քաջալերելու , աջակցելու, դրական վերաբերմունք ցուցաբերելու մասին:
- Անծանոթ բառերի բացատրություն:
- Թվականների գործածությունը մաթեմատիկայում և հայոց լեզվում՝ միջառարկայակն կապի ստեղծում:

Կատարել առաջադրանքները.

1.Դիտել նկարները՝

ա. համեմատել բնագրի մասերի բովանդակության հետ

բ.որոշել ճիշտ հերթականությունը

գ. վերնագրել

դ. կազմել պլան

ե. մեկնաբանել

2. Ի՞նչ ծառերի անուններ գիտես: Շարունակի՛ր շարքը՝ ավելացնելով ևս երկուսը:

Բալենի, նռնենի, կեռասենի,տանձենի . . . . . .

2. Ի՞նչ օրինաչափություն նկատեցիր: Ինչպե՞ս են կազմվում ծառերի անունները:

---

3. Գտի՛ր և դեմ դիմաց գրի՛ր տրված բառերի հականիշները:

Համեստ չար, վատ

ազնիվ գոռոզ, մեծամիտ

բարի խարդախ, խաբեբա

4. Ծառի վրա «թվականներ են աճել»: Գրի՛ր դրանք բառերով:

5. Տրված թվականներին ավելացրո՛ւ –որդ կամ –երորդ ածանցը և կստանաս դասական թվականներ։

Կշռադատում

1.Հարցերի միջոցով ամփոփել դասը.

- Ի՞նչ կար այգում։
- Ի՞նչ տեղի ունեցավ խնձորենու հետ մի օր։
- Ծառի ամենաբարձր ճյուղին ո՞ր խնձորն էր բազմել։
- Ո՞րն էր ամենադժբախտ խնձորը։
- Ինչո՞ւ։
- Խնձորներից յուրաքանչյուրը ի՞նչ բախտի արժանացավ։
- Քո կարծիքով խնձորներից ո՞րն ավելի շատ օգուտ տվեց մարդուն։

2. Մեկնաբանել «Ամեն գործի վերջն է գովելի» ասացվածքի իմաստը՝ ամբողջացնելով և կարևորելով աշակերտների մտքերն ու վերլուծությունները։

Տնային աշխատանքի հանձնարարություն։

Հորինել հեքիաթ՝ խնձորներից մեկի ճակատագրի մեջ փոփոխություն մտցնելով։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով «Քննադատական մտածողության ձևավորումը տարրական դպրոցում» թեման՝ հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումը նոր պահանջներ առաջադրեց ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Կրթության արդիականացումը նշանավորվեց ուսուցման գործընթացը ակտիվացնող նոր՝ քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիայով՝ փոխներգործուն մեթոդների կիրառմամբ:
2. Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան ապահովում է ուսուցման աշակերտակենտրոն մոտեցում, համաձայն որի՝ յուրաքանչյուր սովորող դառնում է դասի գործուն մասնակիցը՝ ինքնուրույն անցնելով գիտելիքների ձեռք բերման ճանապարհը: Նա նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով՝ մասնակցելով որոշակի գործընթացի, ընդգրկվելով թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներում: Այդ կերպ նա յուրացնում է համագործակցային, սոցիալական փոխազդեցության և հաղորդակցական, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքը գործնականում կիրառելու կարողություններ:
3. Քննադատական մտածողության տեխնոլոգիայում դասը կազմակերպվում է ԽԻԿ համակարգով, որի միջոցով ուսուցիչը արդյունավետ կերպով է կազմակերպում ուսումնական գործընթացը՝ անձնակողմնորոշված մանկավարժության սկզբունքներին համապատասխան:
4. Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիայի և նորարական մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների՝ ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, հետազոտական, հաղորդակցական, համագործակցային կարողությունների զարգացմանը, քննադատական, տրամաբանական մտածողության ձևավորմանը, մտքերի պարզ և հստակ ձևակերպելու կարողության զարգացմանը, արդարանալու, պաշտպանվելու, իր տեսակետը հիմնավորելու, ապացուցելու կարողությունների ձևավորմանը, ուսուցիչ-աշակերտ համագործակցային աշխատանքի նոր որակի ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ափոյան Ա., Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում, http://shsu.am/media/journal/2014n1b/37.pdf(20.10.2023):
2. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ., 2015, 316 էջ:
3. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, մաս 2-րդ, Երևան, Էդիթ-Պրինտ, 2012, 112 էջ:
4. Խաչատրյան Ս., Լեզվական գիտելիքների ուսուցումը տարրական դասարաններում՝ ըստ ծրագրային պահանջի, http://shsu.am/media/journal/2014n1b/34.pdf (20.10.2023):
5. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ , Երևան, 2020, https://library.fes.de › pdf-files › :
6. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1980, 564 էջ:
7. https://aspu.am/website/images/files/,25 . 10 . 2023թ . :
8. https://lib.armedu.am/article/557./ 25.10.2023թ.